

Հաստատված է
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի 30. 01. 2019թ. թիվ 8 նիստում
ռեկտոր, պրոֆեսոր _____ Վ.Բ.Առաքելյան

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթղթով սահմանվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականությունը և ներգրավվածության ապահովման մեխանիզմները:

Այս քաղաքականության դրույթների իրականացումը պարտադիր է ինստիտուտի բոլոր մակարդակների կառավարիչների և որակի ապահովման գործընթացների պատասխանատուների համար:

I. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԸ

Որպես «շահակից» ընդունվում է այն անձը (անձիք) կամ կառույցը, ով իր գործունեությամբ անմիջականորեն ազդում է ինստիտուտի գործունեության վրա կամ կրում է ինստիտուտի գործունեության ազդեցությունը:

Այդ տեսակետից մենք առանձնացնում ենք ինստիտուտի հիմնական շահակիցների երկու խումբ՝

- **Ներքին շահակիցներ** (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնառական կազմեր),
- **Արտաքին շահակիցներ** (շրջանավարտներ, գործատուներ, դիմորդներ և նրանց ծնողները, ոլորտի պետական և մասնագիտական կառույցներ և այլն):

II. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Որակի ապահովման գործընթացներում ինստիտուտի շահակիցների ներգրավվածության մեխանիզմները կարող են լինել՝

- ընդգրկվածությունը ինստիտուտի կառավարման տարբեր մակարդակի խորհուրդներում և այլ կառույցներում՝ որպես այդ մարմինների լիարժեք անդամներ,
- աշխատանքը ինստիտուտի որակի ապահովման համակարգի տարբեր կառույցներում՝ որպես շահակիցների ներկայացուցիչներ,
- մասնակցությունը որակի ներքին ապահովման գործընթացների հետ կապված ինստիտուտային, ֆակուլտետային կամ ամբիոնային տարբեր ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին,

- մասնակցությունը ինստիտուտում կազմակերպվող տարատեսակ հարցումներին՝ որպես հարցվողներ, ինչպես նաև դրանց կազմակերպման, իրականացման և արդյունքների վերլուծության աշխատանքներին,
- մասնակցությունը մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և վերանայման գործընթացներին,
- ընդգրկվածությունը ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծություն իրականացնող աշխատանքային խմբերում,
- մասնակցությունը ֆոկուս խմբերին, սեմինարներին, անհատական դեմաոդեմ կամ հեռախոսային հարցազրույցներին և հարցումներին, ինչպես նաև էլեկտրոնային փոստով կամ կայքերով հաղորդակցմանը:

III. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՈԱ գործընթացներում շահակիցների ներգրավվածության նպատակն է՝

- ապահովել որակի ապահովման գործընթացների մասնակցային բնույթը,
- ապահովել բոլոր շահակիցների համար համաձայնեցված մոտեցում որակի ապահովման գործընթացների և դրանց արդյունքների կիրառության վերաբերյալ,
- նպաստել կառավարման գործընթացներում շահակիցների արդյունավետ համագործակցությանը և որոշումների թափանցիկ կայացմանը,
- նպաստել որակի մշակույթի ձևավորման մեջ տարբեր շահակիցների ներդրումներին,
- ինստիտուտում ձևավորել մթնոլորտ, երբ բոլոր շահակիցներն են պատասխանատվություն կրում արդյունքների որակի համար:

IV. ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Անհրաժեշտ է ուսանողների ներգրավվածությունն ապահովել.

- ինստիտուտի հոգաբարձուների խորհրդում ձայնի իրավունքով,
- ինստիտուտի գիտական խորհրդում և որակի ապահովման հանձնաժողովում,
- որակի ապահովման գործընթացներին՝ որպես շահակիցների ուղղակի և ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ներկայացուցիչներ,
- պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացներում,
- ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայությունների և առկա ռեսուրսային բազայի որակի գնահատման գործընթացներում,
- ինստիտուտային կարողությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծության գործընթացներում:

Անհրաժեշտ է պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությունն ապահովել.

- ինստիտուտի գիտական խորհրդի աշխատանքներում,
- գիտական խորհրդին կից որակի ապահովման հանձնաժողովում,
- ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտների անցկացման գործընթացներում,
- ինստիտուտի գիտակրթական գործունեության գնահատման և իրենց կարիքների վերհանման գործընթացում,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում,
- առարկայական դասընթացների ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում,
- ինքնագնահատման և ամբիոնի այլ դասախոսի դասավանդման որակի գնահատման գործընթացում,
- ինստիտուտի կրթական համակարգի գնահատման գործընթացում,
- ինստիտուտի ռեսուրսների գնահատման գործընթացում:

Վ. ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Անհրաժեշտ է շրջանավարտների ներգրավվածությունն ապահովել.

- ինստիտուտի որակի ներքին ապահովման գործընթացներում,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում,
- ինստիտուտի ուսումնական միջավայրի գնահատման գործընթացներում,
- ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտության կրթական ծրագրերի ինքնավերլուծության խմբերի աշխատանքներում:

Անհրաժեշտ է գործադրողների ներգրավվածությունն ապահովել.

- ինստիտուտի կառավարման գործընթացներում ձայնի իրավունքով,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, գնահատման և վերանայման գործընթացներում,
- ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտության կրթական ծրագրերի ինքնավերլուծության խմբերի աշխատանքներում,
- շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության անցկացման և գնահատման գործընթացներում,
- ինստիտուտի որակի ներքին ապահովման այլ գործընթացներում:

Անհրաժեշտ է արտաքին գնահատողների (փորձագետների) ներգրավվածությունն ապահովել.

- մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության գործընթացներում,

- շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության անցկացման և գնահատման գործընթացներում,
- ինստիտուտի նախաձեռնությամբ ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,
- կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումների կազմակերպման և իրականացման գործընթացներին,
- ինստիտուտի որակի ներքին ապահովման այլ գործընթացներում: